



Տեսանկիւն

Վարդանանք, Հայ Ժողովուրդն ու Համաշխարհայնացումը (Globalization)

Մարդկային պատմութեան ոչ այնքան քաջածանօթ հասարակութեան կը թուի, թէ «Համաշխարհայնացումը»՝ նորօրեայ երեւոյթ է:

«Համաշխարհայնացում»-ը, այսօր՝ խորքին մէջ «արեւմտայնացում»ն է: Արեւմտեան աշխարհի (Ամերիկա, Եւրոպա) «մշակոյթ»-ի, բարքերու եւ կենցաղի պարտադրանքն է, աշխարհի մնացեալ ազգերուն վրայ:

Հին աշխարհին մէջ չկար «արեւմտեան»: Իր օրերուն Մեծն Աղեքսանդրը իր դէպի արեւելք արշաւանքներով «հեղինակայնացում»-ն էր, որ կ'ընէր: Հռովմայեցիները՝ «հռովմայնութիւն»-ը: Յոյները՝ իրենցը: Արաբները՝ «Իսլամայնացում»-ը, եւ այլն: Աւելի ուշ Սովետական Միութիւնը՝ յեղափոխութեան իր արտածումով՝ համայնավարութիւնը, Հիթլերը՝ «Նացիզմայնացում»-ը եւ այսպէս, շարունակ: «Թուրանականութիւն»-ն էր պակաս, որ արդէն ամէն օր աւելի եւս կ'ուրուագծուի: Մեծը կը չեզոքացնէ փոքրին մշակոյթը, նոյնացնելով զայն իր հետ քաղաքա-մշակութատնտեսական ազդեցութեան նկատառումներով:

Վարդանանք, իրենց օրին՝ մեծ գոհաբերութեամբ կ'ստեղծեն իրենց աշխարհի վրայ գրադաշտական մշակոյթի տարածումը: Կարելի է երկար քննարկել «բարոյական յաղթանակ»-ի մը շօշափելիութիւնը: Սակայն փաստը այն է, որ Վարդանանք մարտնչումը գումարած այդօրեայ աշխարհաքաղաքական զանազան տուեալներուն վրայ, պատճառ հանդիսացաւ, որ Հայ մշակոյթը գոյատեւէ ու Հայ Ժողովուրդին պատմական արժեքները հասնին մեզի:

Վասակ Սիւնիի կերպարն ալ ինքնին քննարկելի է: Իրապաշտ-քաղաքագետ-դիւանագէտ (real-politician), թէ՛ դաւաճան, սակայն փաստը այն է, որ Վարդանանքը դարերէ ի վեր, ազգովին մեծ հպարտութեամբ կը նշենք, մինչ չկայ Հայ ընտանիք մը, որ իր զաւակը Վասակ կը կոչէ...:

Այսօր՝ Վարդանանք տօնն է, մինչ մենք կ'ապրինք համաշխարհայնացումի ամենածանր ազդեցութիւններուն տակ Հայրենիքի, թէ Սփիւռքի մէջ: Սորոսականները, այսպէս կոչուած «բաց հասարակութիւն»ները, «խաղաղասիրական» կեդրոնները եւ այլոք անխնայ կ'արշաւեն: Մեր ազգային-քրիստոնէական արժեքները լրջօրէն վտանգուած են: Սփիւռքը կը հիւժի, մինչ վտանգուած է Հայրենիքը: Հարցական է իր ազգային-արժեքներով ու մշակոյթով յատկանշուող Հայ Ժողովուրդի գոյութիւնը:

Վասակի կերպարը այսօր յարիւր է Հայաստանի իշխանութիւններուն (աւելի դաւաճանի կերպարով, քան դիւանագետի): Այսօր՝ կը բացակայի ազգային գաղափարախօսութիւնը մեր Ժողովուրդին մօտ: Կը յամենան Վարդանանք...:

Հայոց Պատմութիւնը նման դժուար օրեր ունեցած է, սակայն փաստը այն է, որ Հայ Ժողովուրդը միշտ ալ ծնած է «Վարդան»ներ ու «Ղեւոնդ երեց»-ներ, որոնք ամենաճակատագրական պահուն յայտնուած են: Անոնք իրենց սեփական անձը գոհաբերելու գնով, իրենց սուրն ու խաչը վեր բռնած կոչած են՝ Վասն Հայրենեաց:

ՍԵՒԱԿ ՅԱԿՈԲԵԱՆ



Լիբանանեան Լուրեր

Բացայայտուած Է «Իսլամական Պետութեան» Վտանգաւոր Յանցախումը Մը

Կարեւոր զարգացումով մը, երկ բացայայտուած է «Իսլամական պետութեան» հետ կապ ունեցող վտանգաւոր յանցախումը մը: Այս մասին այսօր յայտարարութիւնը կատարած է Լիբանանի ներքին գործոց նախարար՝ Պասսամ Մաուլաուի:

Մաուլաուի, որ մամլոյ ասուլիս մը տուած է, նաեւ մանրամասնօրէն ներկայացուցած է յանցախումքին մասին կարեւոր մանրամասնութիւններ: Ան նշած է, որ յանցախումքի անդամները պաղտոտիւններ են, որոնք կը ծրագրեն, յատկապէս Պէյրուզի հարաւային արուարձաններուն մէջ ահաբեկչական պայթումներ իրականացնել: Նպատակ ունենալով խուճապահար դարձնել Լիբանանը:

Նախարարը նաեւ նշած է, որ այս բացայայտումը կարեւոր իրագործում մը կը համարուի Լիբանանի ապահովութեան մարմիններուն համար:



Հայկական Լուրեր

Պիտի Շարունակեմ Բացայայտել Ատրպէյճանի Յանցաւոր Գործունէութիւնը. Արման Թաթոյեան

ՀՀ Մարդու իրաւունքներու պաշտպանի պաշտօնի առաքելութիւնը աւարտող Արման Թաթոյեան կը շարունակէ գործունէութիւնը Ատրպէյճանի յանցաւոր գործողութիւններու բացայայտման ոլորտին մէջ: Այս մասին ան յայտնած է Փետրուար 23-ին կայացած մամլոյ ասուլիսի ժամանակ:

Թաթոյեան յիշեցուցած է, որ իր գործնական կեանքը սկսած է մարդու իրաւունքներու պաշտպանի աշխատակազմէն ներս, աշխատած է առաջին եւ երկրորդ Մարդու իրաւունքներու պաշտպաններուն հետ, այնուհետեւ՝ միջազգային կառոյցներու մէջ:

«Այժմ պետական համակարգում ինձ չեմ տեսնում: Տեսնում եմ այլ գործունէութեան՝ հանրային գործունէութեան մէջ: Ես վատ նորութիւն ունեմ Ադրբեյջանի իշխանութիւնների համար: Թող ադրբեյջանցի պատգամաւորները, եթէ դեռ չեն գնացել, փոխանցեն, որ Արման Թաթոյեանը չի դադարեցնում հասարակական գործունէութիւնը, յատկապէս Ադրբեյջանի կողմից խախտումների բացայայտման առումով, եւ կը շարունակի բացայայտել իր կատարած ռազմական յանցագործութիւնները», - հաղորդած է Թաթոյեան:

Փաշինեանի Հրաժարականի Պահանջով Ստորագրահաւաք

«Ազատագրական Շարժումը» 2022 Փետրուար 25-էն կը մեկնարկէ ստորագրահաւաք Նիկոլ Փաշինեանի հրաժարականի պահանջով:

Միջոցառման մեկնարկը պիտի տրուի Անդրանիկ Օզանեանի ծննդեան օրը՝ Փետրուար 25-ին, ժամը 12:00-ին, Եռաբլուրէն:

«Այսպիսով մենք չենք արտօսում Հայաստանի իշխանութեանը մեր անունից բանակցել թուրք-ատրպէյճանական կողմի հետ:

Ակնկալում ենք բոլոր ընդդիմադիր քաղաքական, հասարակական ուժերի եւ անհատների ակտիւ մասնակցութիւնն այս նախաձեռնութեանը», գրուած է յայտարարութեան մէջ:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Պատարագ եւ Շնորհաբաշխութիւն Սուրբ Ղեւոնդեանց քահանաների Տօնի Առիթով

Փետրուարի 22-ին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տօնախմբեց Սուրբ Ղեւոնդեանց քահանաների յիշատակը: Այս առիթով Արմաւիրի թեմի Սուրբ Աստուածածին եկեղեցում (ք.Էջմիածին), հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցուեց Սուրբ Պատարագ:



Սրբազան արարողութեանը ներկայ էին Հայաստանի տարբեր թեմերից ու Արցախից Սուրբ Էջմիածնում համախմբուած 233 եկեղեցականներ, թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբանութիւնը եւ բազմաթիւ հաւատաւոր հայորդիներ:



Պատարագիչն Էր Վայոց Ձորի թեմի առաջնորդարանիստ Սուրբ Աստուածածին եկեղեցու հոգեւոր սպասաւոր Արժանապատիւ Տ. Ներսէս քահանայ Աշուղբաբեանը: Տէր Հայրն իր քարոզում անդրադարձաւ օրուայ խորհրդին եւ ընդգծելով Սրբոց Ղեւոնդեաց սիրանքը՝ ի մասնաւորի Նշեց. «Այսօր մեր հայեացքները կրկին ուղղուած են դէպի մեր քաջարի



նախնիները, որոնց մտքում դաջուած էր Աւետարանի այն խօսքը, որն ասում է. «ով որ ինձ կը խոստովանի մարդկանց առաջ, ես էլ կը խոստովանեմ նրան իմ Հոր առաջ» (Մատթ.10.32), եւ այս խօսքերը ձուլուել էին նրանց սրտերում բաբախող մեծ ու աննկուն հաւատքի հետ:

Այսօր էլ մենք նոյն պայքարն ենք մղում մեր պետականութեան եւ հաւատքի համար, ինչպէս մեր հայրերը: Եւ ընդամենը երկու տարի առաջ մեր երիտասարդները ցոյց տուեցին, որ նրանք արժանի յետնորդներն են Վարդանանց Նահատակների, իսկ նրանց կողքին Սուրբ Ղեւոնդ երեցի օրինակով կանգնած էին մեր գնդերեց տղաներն ու հայ հոգեւորականները, ովքեր մի ձեռքին զէնք, միւսին խաչ պաշտպանում էին մեզ բոլորիս»:



Սուրբ Պատարագի աւարտին Գեորգեան հոգեւոր ճեմարանի հանդիսութիւնների դահլիճում տեղի ունեցաւ քահանաների հաւաք եւ պարգեւաբաշխութիւն: Ողջոյնի խօսք ասաց Շիրակի թեմի

առաջնորդ եւ քահանայից հաւաքի կազմակերպիչ յանձնախմբի պատասխանատու Գեորգեանի Տ. Միքայէլ արքեպիսկոպոս Աջապահեանը:



Այնուհետեւ տեղի ունեցաւ աւանդական շնորհաբաշխութիւնը: Ի գնահատութիւն Հայոց Եկեղեցու անդաստանում երկարամեայ վաստակի, նուիրեալ եւ արդիւնաւոր հովուական ծառայութեան՝ մի շարք եկեղեցականների շնորհուեց աւագ քահանայութեան պատիւ, ծաղկեայ փիլօն եւ լանջախաչ կրելու իրաւունք:

Աւագ քահանայութեան պատուի արժանացան Շիրակի թեմից Արժանապատիւ Տ. Վարուժան քահանայ Տէրտէրեանը եւ Գուգարաց թեմից Արժանապատիւ Տ. Վահան քահանայ Ազարեանը:



**Պատմութեան
Մէջ Այսօր**

Արա Վահունի

Արայիկ Սուրենի Վահունի (24 Փետրուար 1938, Երեւան, Հայաստանի Խորհրդային Ընկերվարական Հանրապետութիւն, Խորհրդային Ընկերվարական Հանրապետութիւններու Միութիւն - 13 Ապրիլ 2006, Երեւան, Հայաստան), հայ խորհրդային բեմադրիչ, գրող Սուրեն Վահունիի որդին:

Արայիկ Վահունիին ծնած է 1938 թուականին Երեւանի մէջ: 1960-1964 թուականներուն կը սորուի ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի մէջ հեռակա կարգով, միաժամանակ կ'աշխատի «Հայաստանի ֆիզկուլտուրնիկ» թերթին մէջ տպագրել ծաղրանկարներ տարբեր ամսագրերուն մէջ ու թերթերուն մէջ: 1969 թուականին կ'աւարտէ ՎԳԻԿ-ի ռեժիսորական ֆակուլտետը (Ի. Իւանով-Վանոյիմուլտիպիկացիոն արուեստանոցը): 1971 թուականին կ'ըլլայ Երեւան կինոստուդիայի փաստագրական ֆիլմերուն բեմադրիչը: Կը Նկարահանէ մօտ 40 ֆիլմ:

Ծաղկեայ փիլօն կրելու իրաւունք շնորհուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառոյցներում սպասաւորող Արժանապատիւ Տ. Հովել քահանայ Օհանեանին, Տ. Սիմիան քահանայ Գրիգորեանին, ՀՀ Չուր Հոգեւոր առաջնորդութիւնից Արժանապատիւ Տ. Մանուկ քահանայ Չեյնալեանին, Արթիկի թեմից Տ. Սողոմոն քահանայ Միսասեանին, Կոտայքի թեմից Տ. Շահան քահանայ Միրզոյեանին եւ Տ. Ժիրայր քահանայ Խաչատրեանին:

Քահանայական լանջախաչ կրելու իրաւունքի արժանացան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կառոյցներում պաշտօնավարող Արժանապատիւ Տ. Սահակ քահանայ Սահակեանը, Տ. Հայասա քահանայ Ղարաբեգեանը եւ Տ. Արմէն քահանայ Կիրակոսեանը, Գուգարաց թեմից Արժանապատիւ Տ. Արարատ քահանայ Շահուերդեանը եւ Տ. Մասիս քահանայ Առաքելեանը, Արցախի թեմից Տ. Միսիթար քահանայ Հարոյեանը, Մասեացոյնի թեմից Տ. Տիրան քահանայ Նահապետեանը, Սիւնեաց թեմից Տ. Խաչատուր քահանայ Հայրապետեանը:

«Զարթոնք» Հայրենիքի Մեջ – 70 –

Կինոփառատոսներին Գորգ ԵՆ Փռում, Երգիծանկարչության Փառատոսին՝ Փոս ԵՆ Փորում

Հարցազրույց. Հայրենի Երգիծանկարիչ Թօթոյի՝ Սուքիաս Թորոսեանի Հետ

ՔՐԻՍԹԻՆԱ ԱՂԱԼԱՐԵԱՆ

«Զարթոնք»ի Երեւանի Աշխատակից

Հայ երգիծանկարիչ, բեմադրիչ Սուքիաս Թորոսեանը ծնունդ է 1959 թուականի սեպտեմբերի 4-ին Երեւանում: 1962-1991 թուականներին եղել է Սպենդիարեանի անվան օփերային թատրոնի դերասան: 1983 թուականին աւարտել է Երեւանի գեղարուեստա-թատերական ինստիտուտը: 1981 թուականին հիմնադրել է «Ոգնիներ» թատրոնը: 1983 թուականին՝ աշխատել է որպէս Սարգարապատի թանգարանի ցուցադրական բաժնի վարիչ: 1991-1996 թուականներին եղել է «Ազգ» օրաթերթի երգիծանկարիչը՝ Թօթօ կեղծանունով:



Սուքիաս Թորոսեանը 1992 թուականին հիմնադրել է Գաւիթ թատրոնը: 1992-1996 թուականներին եղել է Հայաստանի Թեքեան մշակութային միության նախագահ, 1996-2000 թուականներին՝ Առաւօտ օրաթերթի երգիծանկարիչը: 2003 թուականից Թօթոն հիմնել է Հայաստանի երգիծանկարիչների միությունը, հանդիսանում է հիմնադիր նախագահը: Սուքիասեանը 2005-2012 թուականներին եղել է Կոմիտասի անուան երաժշտանոցի աւագ դասախօս, 2013 թուականից՝ «Արեւմտիշապ» միջազգային փառատոն-մրցույթի հիմնադիր եւ կազմակերպիչ:

Ստորել ներկայացնում ենք «Զարթոնք» օրաթերթի **հարցազրույցը հարուստ կենսագրութիւն եւ անցած ճանապարհ ունեցած երգիծանկարիչ Թօթոյի՝ Սուքիաս Թորոսեանի հետ:**

- **Պարոն Թորոսեան, իհարկէ, Ձեզ հետ զրուցելու բազմաթիւ թեմաներ կան, շատ հարցեր, բայց կը ցանկանայի մեր զրոյցը սկսել քաղաքականութիւնից: Ձեր հարցազրույցներից մէկում նշել էք, որ ամբողջ կեանքում յեղափոխական էք եղել: 2018 թուականի յայտնի իրադարձութիւնները Ձեզ համար յեղափոխութիւն էին, թե՛...**



- Նախ պէտք է հասկանալ ի՞նչ ասել է յեղափոխութիւն: Եթէ որեւէ մէկը միւսի փոխարէն աթոռի վրայ է նստում ու որեւէ դասակարգային, աշխարհահայեացքային փոփոխութիւն տեղի չի ունենում, հետեւաբար դա պարզապէս աթոռակոծի է: Մենք այսօր դրան ենք ականատես լինում: Խոստումները շատ էին, բայց իրականութեան մէջ որեւէ բան չշահեցինք, հակա-

ռակը՝ կորցրեցինք: Սկսած մշակոյթի ոլորտից, նախարարութեան վերացմամբ, վերջացած տնտեսական ցուցանիշներով: Հենց մշակոյթի նախարարութեան օրինակը վերցնենք: Նոր իշխանաւորները հասկացան, որ որեւէ նոր բան չեն կարող անել ու որոշեցին փակել այն, որպէսզի ազատուեն գլխացաւանքից: Նոյն Սփիւռքի նախարարութեան մասին կարող եմ ասել: Սփիւռքը, ես միշտ եմ ասել, մեր ողնաշարն է: Սփիւռքին օգնելու, աջակցելու առումով եւս անյաջողութիւն տեղի ունեցաւ: Տնտեսական ոլորտը նոյն վիճակում է: Երաշխիքներ չկան ներդրումների համար: Այս շարքը կարելի է ընդլայնել, գիտութիւն, կրթութիւն եւ այլն: Ես գիտնական ընկերներ ունեմ, որոնք ասում են, որ աշխատում են չնչին աշխատավարձով, որը բաւականացնում է միայն աշխատանքի գնալ գալուն: Պատմամշակութային արժեքների պահպանման տեսանկիւնից ես ապշած եմ, թէ մենք ինչքան նման արժեքներ կորցրեցինք: Դրա համար 2018 թուականի դեպքերը ասել յեղափոխութիւն, սխալ է: Յեղափոխութիւնն իրենից ենթադրում է լուրջ փոփոխութիւններ, նախկին արատաւոր

բարքերի վերացում, բայց մենք հիմա դա չենք տեսնում:



- **Որպէս երգիծաբան՝ ինչպե՞ս կը բնութագրէք Հայաստանը 2018-ի իրադարձութիւններից յետոյ:**

- Գիտեք ինչ, մենք գնալով աւելի վատ պայմաններում ենք յայտնուում: Փողոցի մարդը չի կարող գալ ու կառավարել, ով ուզում է լինի: Ժամանակին կար նման երեւոյթ: Եթէ ուզում ես կառավարման համակարգի մէջ մտնել, պէտք է ինչ-որ դպրոց անցնես, սկզբից ցածր պաշտօններ զբաղեցնես, յաջողելու դէպքում՝ աւելի բարձրանաս: Ինձ տարիներ առաջ Երեւանի քաղաքապետարանում առաջարկել են մշակոյթի բաժնի վարիչ: Ես հրաժարուեցի, քանի որ այդ ոլորտից անտեղեակ եմ: Ինձ ասեցին՝ դու գիտես մենք ենք տեղեակ, կը գաս կը ծանօթանաս: Ու ես հասկացայ, որ պատահական մարդիկ յայտնուում են տարբեր պաշտօնների: Զատրային քաղաքականութիւնը տանում են նրան, որ փողոցից մեկին բերում նշանակում են որեւէ պաշտօնում ասելով՝ «մեր մարդն է»: Հա էլի ձեր մարդը լինի, բայց նա արդէ՞ք Հայաստանի մարդն է, ինքը այդ ոլորտի մասնագէտն է, թե՛ ոչ: Այսինքն ստացւում է՝ մեզ մասնագէտներ պէտք չեն, մեզ պէտք են ծանօթ բարեկամներ, որոնց կը տեղաւորենք աշխատանքի: Դա 90-ականներից է սկսուել:

- **Պարոն Թորոսեան, 90-ականներից մինչ այսօր արժեհամակարգային ի՞նչ փոփոխութիւններ էք տեսնում:**

- Դրական փոփոխութիւն պէտք է լինէր: Ամեն ինչից անկախ: Ցանկացած երկիր 30 տարուայ մէջ դրական փոփոխութիւններ պէտք է ունենայ: Մեզ մօտ այն ինչ կար, կամաց-կամաց վերացուեց: Զկարողանալով կառավարել, տարիների ընթացքում երկրում գործող բոլոր գործարանները փակուեցին, գոյքերը վաճառուեցին: Դա նշանակում է, որ մենք թոյլ ենք, մենք չենք կարողանում կառավարել, բայց դա չի նշանակում, որ այդ գործարանները վատն էին: Յետագայում սկսեցին իբր գործարաններ բացելու տպաւորութիւն ստեղծել: Բայց կարելի էր աւելի ճիշտ քաղաքականութիւն մշակել ու որոշ արտադրութիւնների ուղղութիւններ փոխել: Ես յիշում եմ՝ այն ժամանակ տարբերակ կար գէնք արտադրելու, բայց մեզ թոյլ չտուեցին: Այդ ժամանակ ես ուզեցի հասկանալ՝ ո՞վ թոյլ չի տալիս, չէ որ մենք անկախ պետութիւն էինք, ո՞վ կարող էր մեզ արգելել: Էլ ինչ յեղափոխութեան մասին կարող է առհասարակ խօսք լինել: Հիմա մենք հասել ենք քաղաքական, տնտեսական ու մշակութային փակուղու առաջ, որ ստիպուած ենք կրկնօրինակել մեզանից վատ վիճակում գտնուող երկրների օրինակները: Ես չգիտեմ՝ մեզ ինչը կը փրկի: Երեւի ամեն մեկս մեր մէջ պէտք է յեղափոխութիւն անենք: Այսպէս երկիր կառուցելը բերում է նրան, ինչ այսօր ունենք:

- **Գալով քաղաքականութիւնն ու արուեստին, կասե՞ք ինչպէս են այս երկու ոլորտները փոխկապակցուած իրար:**

- Ասեմ: Նոյնիսկ ռազմական մեծ յաջողութիւններն անպայման ամրագրւում են մշակոյթով: Մենք ունեցել ենք մշակոյթ, բայց դա լաւ ուսումնասիրուած չէ: Մատենադարանում հազարաւոր գրքեր կան, որոնք տարիներով չեն բացւում: Մենք մի քանի հազար տարուայ պատմութիւն ունենք, որը չի թարմացւում, չի ուսումնասիրւում:

- **Եկեք խօսենք երգիծանքի ժանրի մասին, որի զարգացման գործում դուք ձեր անուրանալի ներդրումն ունեցել էք եւ ունեք: Ժանրը ի՞նչ զարգացում է ունեցել Հայաստանում, շատ դէպքերում մարդիկ երգիծանքն ու ծաղրը դիտում են նոյն հարթութեան մէջ եւ չեն հասկանում ծաղրի ու երգիծանքի տարբերութիւնը:**

- Մի հետաքրքիր բան կայ: Երկրի համար ամենադժուար պահերին երգիծանքը սկսուել է աւելի շատ տարածուել:

Լիբանանահայ Դպրոց

Մեսրոպեանը Նշեց Սրբոց Վարդանանց Տօնը

Հայ կաթողիկե Մեսրոպեան բարձրագույն վարժարանի աշակերտները արժանատուապես նշեց Սրբոց Վարդանանց տօնը, վերանորոգելով իր ուխտը հաւատարիմ մնալու Հայրենիքի եւ Հաւատքի պաշտպանութեան անոնց կտակին:



Այս առիթով, 23 Փետրուարին վարժարանի շրջափակին մեջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, որուն ընթացքին գործադրուեցաւ զեղարուեստական կոկիկ յայտագիր մը՝ տարբեր բաժանմունքներու աշակերտներու մասնակցութեամբ:



Աշակերտութեան անունով Աննա Մարիա Ղազարի բացման խօսքէն ետք Ծաղիկ դասարանի աշակերտները կատարեցին երգ մը եւ արտասանութիւն մը: Անոնց



յաջորդեց վարժարանի Փոքր Ծիծեռնակներ երգչախումբին կատարումը՝ պարոն Մանուէլ Զեյիշեանի խմբավարութեամբ, ապա երեք խմբային ասմունքներ նախակրթարանի եւ միջնակարգի աշակերտներուն մասնակցութեամբ: Հնչեց «Հիմի էլ լռենք»՝ նուագի աշակերտական քառեակին կողմէ, իսկ եզրափակումը կատարուեցաւ Մեծ Ծիծեռնակներու «Վարդանանց ասպետներ» երգով: Աշակերտութեան ուղղուած իր պատգամին մէջ Մեսրոպեանի տնօրէն պարոն Կրէկուար Գալուստ դիտել տուաւ, որ շատ քիչ ազգեր այսքան հաւատարմօրէն



Վարդան եւ իր 1066 զինակիցներ զոհուեցան, հայերը կը փառաբանեն այդ զոհողութիւնը, հաւատալով նահատակուածներուն պէս, որ «Մահ իմացեալ անմահութիւն է», ըսաւ պարոն Գալուստ: Ան շեշտեց, որ հայ ազգային ինքնութեան պահպանումը իր ամէն մէկ դոստերման մէջ ինքնին աւարայրեան ճակատամարտ մըն է, որուն միջնաբերդերը, մանաւանդ Հայ Սփիւռքին մէջ, հայ դպրոցն ու հայ եկեղեցին են:

Վարդանանց տօնը նշուեցաւ նաեւ Մեսրոպեան մանկապարտեզին եւ մանկամստօրին մէջ, փոքրերուն համապատասխան աշխատանքներով:

**Տեղեկատուական գրասենեակ
Հայ Կաթողիկէ Մեսրոպեան
Բարձրագոյն Վարժարանի**

Առողջապահական

Covid-19-Էն Ետք Կրնան Աւելնալ Հոգեկան Խանգարումները

Քորոնա ժահրով վարակուելէն ետք, մէկ տարուան ընթացքին, մարդու մօտ կ'աւելնայ հոգեկան տարբեր խանգարումներու, այդ շարքին տագնապի, «տիփրեշըն»ի յառաջացման, քունի խանգարման եւ antipsychotic դեղերու (դեղեր, որոնք նախատեսուած են հոգեկան գործունեութեան խանգարումներու բուժման համար) օգտագործման հաւանականութիւնը: Հետազօտութիւններու համաձայն՝ COVID-19-ով հիւանդացողներու 20 առ հարիւրը կ'ունենայ հոգեբանական եւ նեարդաբանական տարբեր բարդութիւններ, այսպէս կոչուած,



յետքովիտային համախտանիշի ծիրին մէջ: Ամէնէն աւելի յաճախ հանդիպող հետեւեանքներէն են «տիփրեշըն»ը, տագնապայնութիւնը, խուճապայնութիւնը, կաթուածները եւ նոյնիսկ ուղեղի արիւնահոսութիւնը:

Շար. Էջ 08



Եղեռնի Հետքերով - 29

Տեօրթեոյցի Պենոն Վասիլեանի Յուշերը Չոր Մերճուման-Չորք Մարգպան

Շար. Նախորդ թիւէն

- Լաւ, մէկ գաւաթ խմենք վերջը կ'երթաս,- ըսաւ:

- Տիկինը չի՞ խմեր,- հարցունցի:

- Կը խմէ,- ըսաւ,- աղջիկս ալ, ամենքս մէկ խմենք:- Չորներնիս մէկ կենաց ըսինք խմեցինք: Ասոնք մարդ ու կին աչքով յօնքով իրարու յայելով խմեցին: Ես ելայ՝ «ինծի կը ներէք» ըսի, պարոն Նեկրոֆաք՝

- Հատ մըն ալ խմենք, գնա՛,- ըսաւ: Մէկ հատ ալ խմեցինք, «au revoir» մնաք բարով, վաղը կանուխ նորէն կու գամ,- ըսի, քալեցի, ինք ալ զիս ճամփու դրաւ:

Ես ճամփայ ելայ, սկսայ ես ինծի խօսիլ՝ այս ի՞նչ է լաւ մէկը դէմս չ'ելլեր: Ասոնք ի՞նչու մարդ ու կին իրարու այդպէս կը յայելին, արդեօք ինծի խա՞ղ պիտի ընեն: Բայց ինչ կ'ուզէ թող ըլլայ՝ վաղը նորէն պիտի երթամ, մտածեցի: Ժամը երեքը անց էր, ուղղակի գացի ատանացիներու սրճարանը, տեսայ միքանի մարդիկ եկեր են, զիս քովերնին կանչեցին, սուրճ հրամցուցին, սուրճը խմեցի, ըսին՝

- Պարոն Պենոն Գեորգ չաւուշը մեզ կը սպասէ, պետք է երթանք:- Ելանք գացինք Գեորգ չաւուշին տունը, հոն տաս-տասնհինգ հոգի հաւաքուած էին, բարեւեցինք: Գեորգ չաւուշը կիներուն սեղան պատրաստել տուաւ: Սեղանը պատրաստեցին, զիս հրաւիրեցին սեղանին շուրջ: Նստանք, Գեորգ չաւուշը հարցունց՝

- Ու՛ր է Համբարձում պիրետերը, դեռ չեկա՛ւ:- Հագիւ խօսքը վերջացուցած՝ պիրետերը ներս մտաւ: Գեորգ չաւուշը պիրետերին՝ հրամէ այստեղ, բարի եկար,- ըսաւ, իմ դէմի աթոռը ցոյց տուաւ, հարցունց՝ կը ճանչնա՞ս մեր հիւրը: Պիրետերը ըսաւ՝

- Ի՛նչպէս չեմ ճանչնար, մեր Տեօրթ Եոյի չեթէներուն մեծն է Պենոն Վասիլեանը:- Բաժակը ձեռքը առաւ, ոտքի ելաւ,- յարգելի բարեկամներ,

1919ին Պենոնը եւ Հչեր Աղուիկեանը միասին տասնվեց տարեկան հասակնին սկսան վրէժ առնել թուրքերէն, սկսան թշնամիս զարնել, վերջը իրենց միացան ուրիշներ, տասնմէկ հոգիսոց հրոսակի, չեթէներու խումբ մը եղան, սարսափ բերին թուրքերուն, Տեօրթ Եոյի շուրջի հինգ-վեց թրքական գիւղերը ամբողջութեամբ այրեցին-քանդեցին, մինչեւ Չուխուր Օւա գացին զարնելով-կտրելով եւ վերադարձան: Աս իմ դէմս նստողը եւ Հչերն էին խումբին առաջնորդը, խմենք մեր Տեօրթ Եոյի հերոսներուն կենացը:

Ամենը միասնաբար խմեցին մեր կենացը, յետոյ ամէն մէկը իր գիտցածները սկսաւ պատմել ու կենաց խմել: Գեորգ չաւուշը կիներուն ձայն տուաւ՝

- Չիքօֆթէն ու՛ր մնաց, բերէք:- Չիքօֆթէն բերին, կերանք-խմեցինք մինչեւ ուշ գիշեր: Ժամը տասներկու եղաւ, ամէն մարդ իր տունը գնաց, մենք մնացինք առանձին՝ ես ու Գեորգ չաւուշը: Իրեն ըսի՝

- Մեր Տեօրթ Եոյի մէջ ես չէի տեսած կանայք եւ աղջիկներ աշխատին դուրսը, անոնք իրենց տուններու գործերով զբաղած կ'ըլլային, բայց այստեղ կը տեսնեմ կիները գործի կ'երթան ֆապրիքներու, վաճառատուներու, խանութներու, նոյնիսկ սափորիչները աղջիկներ են, սրճարանները խմիչքի տեղերը լրիւ կանայք եւ աղջիկներ են:- Գեորգ չաւուշը պատասխանեց՝

- Պենոն, այստեղ մեր սովորութիւններուն նման չէ, հոս աղջիկ մը չես գտներ որ իր ամուսնութեան օրը դեռ կոյս ըլլայ: Ատանկ աղջկայ վրայ կը խնդան, յետամնաց է կ'ըսեն... Եւ դեռ՝ աղջիկներ երախայ ալ կ'ունենան, հոս անոնք համար մասնաւոր տեղեր կան, այնտեղ պզտիկներու երեսը անգամ չտեսած մայրապետերը կ'առնեն զանոնք վանք կը տանին, հոն կը մեծնան, վանքի դպրոցը կ'երթան, վանքի հետեւող կ'ըլլան: Բայց մենք չենք խառնուիր այդ հոսանքին, մեր աղջիկները մեր տղոց հետ կ'ամուսնանան, մեր սովորութիւններուն համաձայն:

Շար. յաջորդ թիւով

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Պատարագ եւ Շնորհաբաշխութիւն...

Սկիզբը Էջ 02

Շնորհաբաշխութեան աւարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հոգեւորականաց դասին բերեց իր օրհնութիւնն ու հայրապետական պատգամը:



Անդրադառնալով Սրբոց Ղեւոնդեանց օտոնի խորհրդին՝ Նորին Սրբութիւնը մասնաւորաբար նշեց. «Ղեւոնդ Երեցը դարձաւ հաւատքի ու հայրենիքի համար ազգային պայքարի գաղափարակիր՝ մի հանգամանք, որը խորհուրդ եւ առաքելութիւն հաղորդեց նրա կերպարին դարերի հոլովոյթով: Սրբոց Ղեւոնդեանց օրինակով կրթուել են բազում սերունդներ, որոնք փոխանցել են մեզ օրինակելի կերպարը հաւատի քաջութեան, առ հայրենին եւ Եկեղեցին նախանձախնդրութեան, ազգային եւ հոգեւոր ինքնութեան պահպանման ջատագովութեան եւ յանուն յաւիտենականի

քրիստոնէական ճշմարիտ անձնագոհութեան:

Այսօր Սուրբ Ղեւոնդ Երեցի նախաձեռնած ազգային ինքնապաշտպանութեան հրամայականը չի վերացել: Փոխուել են ժամանակները, սակայն անփոփոխ են մարտահրաւերները: Մեր ժողովուրդը կանգնած է նոյնական մարտահրաւերների առջեւ, առկայ է նաեւ ճակատը, ուր պայքար է մղում յանուն մեր աւանդական սրբազան արժեքների յարատեւութեան, մեր ինքնութեան պահպանութեան եւ մեր ապագայի: Եկեղեցին մեծ առաքելութիւն, աւելին՝ պատասխանատուութիւն ունի այդ արժեքների պաշտպանութեան ու զօրացման գործում»:

Ամենայն Հայոց Հայրապետը գոհու-նակութեամբ արձանագրեց նաեւ, որ այսօր էլ Եկեղեցականութեան մէջ կան մերօրեայ Ղեւոնդ երեցներ, որոնք նոյն ոգին, յանձնառութիւնն ու գիտակցութիւնն են դրսեւորում հայ ժողովրդին մատուցած ամենօրեայ սպասաւորութեան ու խնամքի մէջ, ազգային-հայրենական անդաստանում յառնած լրջագոյն մարտահրաւերների պայմաններում: «Իբրեւ Եկեղեցի՝ չենք կարող անտարբեր եւ անհաղորդ մնալ այս օրերին մեր ժողովրդի կեանքում

տեղ գտնող տարատեսակ երեւոյթների նկատմամբ, որովհետեւ մեր սրբազան առաքելութիւնն է ոչ միայն մասնակիցը դառնալ առկայ խնդիրների յաղթահարման աշխատանքների, այլեւ կրողը ծանր լուծի, ամօքողը ցաւի, սփոփողը վշտերի, ցրողը մեր ժողովրդի հոգին պատած յուսահատութեան եւ տրտմութեան: Մեզ պատուհասած պատերազմը, որը մեծ կորուստներ պատճառեց մեր հայրենիքին ու ժողովրդին, դեռ աւարտուած չէ: Այն շարունակում է՝ ոչ մարտի դաշտում, սակայն ամենատարբեր ոլորտներում եւ տիրոյթներում: Չի դադարում հայատեսացութեան եւ թշնամանքի սերմանման քարոզչութիւնը սահմանի միւս կողմից, յաղթահարուած չեն պատերազմի առաջ բերած մարտահրաւերները, վտանգուած է մեր սրբազան ժառանգութիւնը Աղրբեջանի վերահսկողութեան տակ անցած տարածքներում, շարունակում է ներքաղաքական կեանքում լարուածութիւնը, բեւեռացուածութիւնը, արտագաղթը, խորանում է ապագայի հանդէպ ժողովրդի մէջ տիրող անորոշութիւնը», - ընդգծեց Հայոց Հոգևորապետը՝ կարեւոր համարելով, որ նման բարդագոյն իրադրութեան մէջ առաջնային պետք է շարունակի նկատուել հովուական խնամքը

սոցիալական ծանր վիճակում յայտնուած արցախցիների, տեղահանուածների, զոհուածների, անյայտ կորածների, գերութեան մէջ գտնուողների եւ վիրաւորների ընտանիքների հետ:

Նորին Սրբութիւնը խնամատար ծառայութեան մէջ մեծապէս կարեւորեց նաեւ քրիստոնէական դաստիարակութեան եւ կրթութեան ծրագրերի խթանումը՝ հայորդիների հոգիներում զօրացնելու հաւատքն առ Աստուած եւ սերն առ հայրենին ու մեր սրբազան արժեքները: Այս առումով Վեհափառ Հայրապետը թելադրեց, որ բոլոր ծխերում պետք է հնարաւորինս ձեւաւորուեն կիրակնօրեայ դպրոցներ, հովուութիւններից ներս մասնաւոր ուշադրութիւն պետք է դարձուի երիտասարդութեանը, նրանց առաւել գործունէ ներգրաւմանը եկեղեցական-ծխական կեանքում, ծխերից ու թմերից ներս տարուող սոցիալական, կրթական աշխատանքներում:

Վերջում Հայոց Հայրապետն աղօթք բարձրացրեց առ Աստուած հայրենի երկրի՝ Հայաստանի եւ Արցախի խաղաղութեան ու անվտանգութեան, աշխարհասփիւռ հայ ժողովրդի զաւակների բարեշէն կեանքի եւ Հայոց Եկեղեցու պայծառութեան համար:

Միասին ենք Բոլորս

ՍԵՒԱՆ ՍԵՄԵՐՃԵԱՆ

Նորին հետ չհամակերպող, նորին ու հինին միջեւ տատանող եւ հինին հետ կապ չունեցող երեք սերունդներով կ'ապրինք մեր այսօրը՝ անդամ:

Միասին ենք մառախլապատ մեր երկինքին տակ, հինէն՝ դպրոցական դեղնաւուն հայերէնի դասագիրքերուն մէջ սկսած աւարայրցիներուն «ոչ իմացեալ մահ»-էն մինչեւ այսօրուան անմահացողները, անյայտներն ու չթաղուածները, երկաթե ձեռք-ոտք, ով գիտէ՝ ինչ սիրտ կրողները,

Անոնց գոնէ դառնալով գոհացող մայրերը,
Քարերուն հետ խօսողները,
չսփոփուողները...

Միասին ենք բոլորս.

Չկշտացողները, ամէն օր, ամէն տեղ հանուող-նշանակուող նախարարները, տեղակալները, անոնց անվերջ հանդիպումներն ու այլեւս ամանց զարմանալու աս բոլորին հետեւողները,
մեր դարաւոր բարեկամները, թշնամիներն ու անոնց յայտարարութիւնները, հողին վրայ ապրող մարդոցմէ հեռու-հեռու քննարկումները, հրաւիրուող քաղաքագէտներն ու պատմաբանները, ծամծմուած տեսութիւնները, «Ուր հաց՝ հոն կաց»՝
կարծիք յայտնող շահամոլներն ու երբեք չհանդիպող մեր կարծիքները,

Միասին ենք բոլորս.

Մայրենի լեզուի օրը նշողները, Հայրենիքին ու սփիւռքին այնուամենայնիւ չհամընկնող «տարի»ները, արեւմտահայերէնին չափ նահանջող արեւելահայերէնը,
ընկերային հարթակներու էջերուն վրայ տեղացող ամօթալի լուտանքները, վերջին տարիներուն փակուած բազմաթիւ դպրոցները, օտարները, աշխարհաքաղաքացիներն ու
«ինչո՞ւ հայերէն պէտք է սորվիմ»ները...

Միասին ենք ու պիտի մնանք բոլորս.

Քաջ Վարդանին նկարը ներկող մանկապարտեզի մանուկէն մինչեւ հայկական ակումբներուն մէջ արաբերէն կամ անգլերէն խօսող հայ երիտասարդները...

Հաւատացեալը Ե՛րբ Վտանգ Է

ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Թուրքիա այն երկիրն է, ուր գործող բոլոր կառավարութիւնները իրենց նպատակ դրած են մանուկ տարիքներէն սկսեալ ձեւաւորել երիտասարդ սերունդ մը, որ պարտի մտածել իրենց նման: Այս ըմբռնումն է, որ իր դրոշմը դրած է երկրի կրթական համակարգին: Սակայն մարդկային միտքը եւ բնութեան կանոնը կը մերժէր այդ պարտադրանքը եւ երիտասարդութիւնը կը համակերպէր դարի պահանջներուն: Իշխանութիւններու այս ռազմավարութիւնը որքան ալ յարատեւ բնոյթ ունենայ կայ նաեւ ոստումներու շրջաններ: Անոնցմէ կարեւորագոյնը տեղի ունեցաւ 12 Սեպտեմբեր 1980-ի զինուորական յեղափոխութենէ ետք, երբ բանակայիններու համար գլխաւոր վտանգ կը համարուէին համալսարանական երիտասարդականութիւնը: Այդ վտանգը չէզոքացնելու միտումով զօրավար Էվրէն հիմնեց Բարձրագոյն Ուսման հիմնարկ մը, որ զինուորական կարգապահութիւն պիտի պարտադրէր բոլոր համալսարաններէ ներս: Այս ընելու համար նախ վերացուեցաւ ակադեմիայի անկախութիւնը: Համալսարանները վերածուեցան երկրորդական վարժարաններու շարունակութեան: Իսկ Արդարութիւն եւ Չարգացում Կուսակցութեան իշխանութեան շրջանին տեղի ունեցաւ շատ աւելի սահմանակցութեան մերձեցում մը, քանի որ Էրտողան ինք կը բարձրաձայնէր հաւատացեալ եւ ռիսկերի սերունդ մը պատրաստելու հեռանկարը: Հաւատացեալ սերունդ պատրաստելու մարմաջը հասաւ մինչեւ մանկապարտեզի հասակի երախաներու կրօնական ուսուցման: Մինչ այդ երկրի Կրթութեան Նախարարութեան հսկողութեան տակ գտնուող



Մեզ հետ պիտի մնան
չանձնուողները, չնահանջողները,

Հաւատացողները, հաւատարիմ մնացողները,
Խղճմտօրէն իրականութիւնը գրողները,

Չյուսահատողները,
ստեղծագործողները,
փնտռողները,

Այսօրուան մանուկը, պատանին ու երիտասարդը ճանչցող դաստիարակները, հայերէնն ու հայկականը սիրել ու ինքնաբերաբար գործածել տուող դասատուները,

Իրենց յաջորդողին մասին մտածողները, մարդ պատրաստողները,

Լուսաւոր միտքերը հովանաւորող, անոնց ձեռք մեկնող ազնիւ կազմակերպութիւնները,

Այսօրուան աշխարհին լեզուով հայերէն խօսողներն ու գործողները,

Առաջուան նետ ու նիզակներուն, փիղերուն փոխարէն այսօր՝ ամէն ինչի դէմ կռուողները...

Միասին պիտի մնանք.

Անտարբերները,
Բոլոր ժամանակներուն Վասակները,
Երէկուան ու այսօրուան Վարդանները,

Գալիքը գրողները...

դպրոցներէ ներս հետզհետէ իր ազդեցութիւնը ծաւալեց Կրօնից Տեսչութիւնը եւ որոշ աղանդներու կազմակերպութեամբ գոյացած կարգ մը հիմնադրամներ: Այս բոլորը պիտի ունենային իրենց բնական հետեւանքները եւ արդարեւ ունեցան:

Այսօր Թուրքիա թէեւ կը պարծենայ ամէն քաղաքէ ներս համալսարան մը ունենալով, բայց խիստ վիճելի է այդ կառոյցներու համալսարան կոչումը: Արդարեւ անոնցմէ ոչ մէկը տեղ գտած են աշխարհի լաւագոյն 500 համալսարաններու ցանկին մէջ:

Բացի այդ, կիրարկուած կրօնաբարոյական ուսման ծրագրի հետեւանքով Թուրքիոյ միջնակարգ դպրոցներու աշակերտները ի վիճակի չեն իրենց մայրենի լեզուով իսկ ուղղուած հարցումները ընկալելու:

Բարձրագոյն Ուսման Հիմնարկը Նոր շրջաբերական մը հրապարակելով յայտարարեց թէ ալ աւելի պիտի դիւրացնէ համալսարաններու մտից քննութիւնները: Հարկւորաւոր հարցումներէն միայն մէկուն ճիշդ պատասխան տալը անգամ բաւարար պիտի ըլլայ համալսարան ընդունուելու համար:

Այս որոշումի իբր արդիւնք կրնանք կանխատեսել թէ յառաջիկայ տարիներուն ալ աւելի պիտի աճի համալսարանաւարտ գործազուրկներու թիւը:

Տեսնելով հանդերձ քաղաքակիրթ երկիրներու նման նիւթերու մէջ արծա-նագրած յաջողութիւնը յամառի սխալին վրայ ուրիշ ոչ մէկ նշանակութիւն ունի, քան սերունդներ գոհել յանուն յետադիմականութեան: Հաւատքը ինքնին ոչ մէկ վտանգ պիտի ներկայացնէ, երբ սահմանուած պիտի ըլլայ իր անհատականութեան մէջ: Իսկ երբ պիտի գտնուին մարդիկ որոնք իրենց վրայ իրաւունք պիտի տեսնեն հաւատացեալ սերունդներ պատրաստել, ահա այդ պահուն, այդ Նոյն հաւատքը պիտի դառնայ խիստ վտանգաւոր համայն մարդկութեան համար: Եկեք աւարտենք հաւատացեալներու բառամթերքով: Աստուած մի արասցէ:

«Ակօս»

Սլաք

Համատարած Պառակտման, Խոր Հիասթափության Եւ Հաւաքական Կամքի Զլատման Հանգրուանի Մը Սեմին

ԱՆԴՐԱՆԻԿ ՔԵՇԻՇԵԱՆ

Հայաստանի Հանրապետության նոր նախագահի ընտրությունը օրերու հարց է, եւ հաշուի առնելով որ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության պատգամաւորները, Ազգային ժողովին մէջ ունին իրենց առաջադրած թեկնածուն ընտրելու համար քուէներու անհրաժեշտ քանակը, վստահաբար, ՀՀ յաջորդ նախագահ պիտի ընտրուի պարոն Վահագն Խաչատրեան: Յոյժ կատարելով թրքական աղբիւրին, օրերէ ի վեր համացանցը ողողուած է լրատուութեամբ, այն մասին, որ 2011 թուականին, Վահագն Խաչատրեան մասնակցելով Թուրքիոյ մէջ կազմակերպուած՝ հայ - թրքական յարաբերութիւններուն վերաբերող ժողովի մը, յայտարարած է, որ պատրաստ է ներողութիւն խնդրելու Թուրքիայէն՝ «ԱՍԱԼԱ - ի եւ տարածաշրջանի այլ արհեստագործութիւններուն համար»: 2011 թուականին, Վահագն Խաչատրեան Հայաստանի Հանրապետության մէջ գործող քաղաքական կուսակցութիւն մը ներկայացնող անհատ գործիչ մըն էր, եւ իր բացարձակ իրաւունքն էր ունենալու եւ արտայայտելու սեփական, կամ, իր ներկայացուցած քաղաքական միաւորի տեսակետները ու կեցուածքները: Սակայն այսօր, ան փաստօրէն ՀՀ ապագայ նախագահն է, հետեւաբար, առնուազն ունի բարոյական պարտաւորութիւնը, Հայաստանի եւ համայն հայութեան համար պաշտօնապէս յայտարարելու, եթէ կը շարունակէ մնալ շուրջ տասը տարի առաջ արտայայտած իր տեսակետներուն վրայ: Մինչ այդ, նկատի առնելով խնդիրին ստացած հանրային լայն հնչեղութիւնը, անհրաժեշտ կը համարեմ կատարել քանի դիտարկումներ՝ շեշտելով տառերուն վրայ դնելու համար: Վահագն Խաչատրեան, կամ որեւէ այլ անձնաւորութիւն, իրաւունք չունի արտայայտուելու համայն հայութեան անունով, առաւել եւս, ան իրաւունք չունի արտայայտուելու ազգային - ազատագրական պայքարի ռաիփրայ կազմակերպութեան՝ Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակ (ԱՍԱԼԱ)-ի անունով: Հայ ժողովուրդը՝ ոչ ոքէն, նամանաւանդ Թուրքիայէն, ներողու-

"Ermenistan özür dilemeye hazır"



թիւն խնդրելու քաղաքական, իրաւական կամ բարոյական պարտաւորութիւնը չունի՝ եւ չի՝ կրնար ունենալ, ընդհակառակը, յատկապէս Թուրքիան, հայ ժողովուրդէն ներողութիւն խնդրելու, Հայոց Ցեղասպանութիւնը ճանչնալու, դատապարտելու եւ հայ ազգի անկորնչելի իրաւունքները հատուցելու անժամկետ պարտաւորութիւնը ունի՝ եւ պիտի ունենայ: ԱՍԱԼԱ-ի պայքարի գերագոյն նպատակը՝ հայապատկան բռնագրաւեալ հողերու ազատագրութեան համար էր եւ է՝, հայկական ազգային ինքնութեան պահպանութեան եւ պատմական իրաւունքներուն պաշտպանութեան համար էր եւ է՝, այսինքն, մեր ազգի, իր պատմական հայրենիքին մէջ գոյատեւելու, զարգանալու եւ յանգրտանալու համար էր եւ է՝, իսկ այդ նպատակի իրականացման համար, հնարաւոր եւ ձեռնադրելի միջոցներու օգտագործումը, ազգերու պատմութեան մէջ արդարացուած է՝ թէ՛ պատմականօրէն, թէ՛ քաղաքականօրէն եւ թէ՛ իրաւականօրէն: Հայաստանի Հանրապետության մէջ ներկայիս իշխանութեան վրայ գտնուող քաղաքական ուժը, իր առաջնորդով հանդերձ, պարտաւոր է ճանչնալու եւ ընդունելու հայ ազգի իրաւունքներու կարմիր գիծերը, որոնցմէ որեւէ շեղում կամ հրաժարում, պետք է ըլլայ անընդունելի եւ անհանդուրժելի բոլորին համար, այլապէս, եթէ շարունակուին, բացայայտ կամ քողարկուած, հրապարակաւ կամ կուլիսներու ետեւ, մեր պատմական իրաւունքներէն հրաժարուելու դատապարտելի գործընթացները, լուրջ մտավախութիւն ունիմ, որ համայն ազգը պիտի թեւակոխէ՝ համատարած պառակտման, խոր հիասթափութեան եւ հաւաքական կամքի զլատման տաժանելի եւ կործանիչ հանգրուան մը:

ԲԱՆ ՈՒ ԳԻՐ

Անդրանիկին

Անտարքեր չես եղել հայ ազգիդ համար,
Վեր կաց գերեզմանից, Անդրանիկ փաշա,
Շրջի՛ր հայկական զօրքերիդ առաջ,
Վեր կաց գերեզմանից, Անդրանիկ փաշա:

Մատաղ լինեմ քաջ Զեռուն, Սմբատին,
Որ հոգեառն էին թըշնամիների,
Յաղթական բազուկդ շարժի՛ր վերստին,
Վեր կաց գերեզմանից, Անդրանիկ փաշա:

Չեմ կարող հաշտուել այն վճռի հետ,
Որ այլոց պիտ մնան Մուշն ու Մուրադ գետ,
Հայերի զօրավար, քաջ սպարապետ,
Վեր կաց գերեզմանից, Անդրանիկ փաշա:

Լսիր Հայրիկ երգչի աղերսաբանը,
Յարութիւն առ, պատռի՛ր քո սուրբ դամբանը,
Զեզ է սպասում Հին Հայաստանը,
Վեր կաց գերեզմանից, Անդրանիկ փաշա:

Խօսք և երաժշտութիւն՝ Գուսան
Հայրիկի (Հայրիկ Մուրատեան)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՑ

24 2022
ՓԵՏՐՈՒՄ

Կրկ երկ երջ Գրգ Հնգ Ուրբ Երբ

		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28					



ՌՈՒԲԵՆ ՎԱՐՇԱՍՏԿ
(1936 – 2000)
«Դիմանկար»



ԹԵԶԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ
Լիբանանի Տեղական Վարչութիւն

ՄՇԱԿՈՅԹԻ ԴԵՐԸ ՍՓԻՒՔԻ ՀԱՅԱՊԱՅՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԵՋ

Արամ Ա. Կաթողիկոսին Հռչակած Սփիւռքի Տարուան Առիթով

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 25 Փետրուար 2022-ի երեկոյեան ժամը 7:00-ին,
Թեքեան Կեդրոնին մէջ, Ա. յարկ, Ժըմմէյզի

ՀՐԱԷՐ

Առողջապահական

Covid-19-Էն Ետք Կրնան Աւելնալ Հոգեկան Խանգարումները

Սկիզբը էջ 04

Նոր հետազոտության ընթացքին ամերիկացի գիտնականները գնահատած են հոգեկան առողջության վրայ քորոնա ժահրային վարակի հետեւանքները՝ տագնապայնությունը, «տիփրեսիվ» վիճակը, «սթրես»ային խանգարումները՝ կապուած antipsychotic նիւթերու օգտագործման հետ, «նիւրո-

քոկնիթիվ» գործառոյթներու նուագումը եւ քունի խանգարումը: Պարզուած է, որ COVID-19-Էն ետք մարդոց մօտ մէկ տարուան ընթացքին հոգեկան խանգարման վտանգը աւելի եղած է 60 առ հարիւրով՝ այն մարդոց հետ բաղդատելով, որոնք քորոնա ժահրով չեն հիւանդացած:

Afhil.com

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ



ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՉՕՐԱՎԱՐԱՑ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Նախագահութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, 22 Փետրուար 2022-ի առաւօտեան ժամը 9:30-ին, Սրբոց Վարդանանց Տօնին առիթով Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի մատուցուի Ս. Եւ Անմահ Պատարագ:

Պիտի պատարագէ ու քարոզէ
ԳԵՐՇ. Տ. ՄԱՎԱՐ ԵՊՍ. ԱՇԳԱՐԵԱՆ

Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն մասնակցելու եկեղեցական արարողութեան, որպէսզի Սրբոց Վարդանանց ոգիով լիցքաւորուած ու վերանորոգուած՝ ազգովին շարունակենք մեր եկեղեցանուէր եւ ազգաշէն առաքելութիւնը:

ԴԻԲԱՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՄԵՐՁԱԽՈՐ ԱՐԵԻԵԼԵԻ
ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԺՈՂՈՎ
ԼԻԲԱՆԱՆ

ՏՕՆ՝ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ
ՄԻԱՑԵԱԼ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ
Պատգամաբեր՝ Պատ. Յակոբ Աքայաշարեան
Հայ Աւետարանական Եկեղեցիին մէջ,
Նոր Մարաշ, Լիբանան

Հինգշաբթի, 24 Փետրուար, 2022, կ.ա. ժամը 10:00-ին:

Հրաւեր

«Զարթօնք» Հայրենիքի ՄԷջ – 70 –

Կինոփառատօններին Գորգ Են Փռում...

Սկիզբը էջ 03

Պատահական չէ, որ 1914, 15, 20 թուականներին բաւականին շատ երգիծանկարներ էին անում: Նման գործերի առատութիւն կար: Սովետական կարգերի հաստատումից յետոյ երգիծանքը մի քիչ ուրիշ ուղղութեամբ գնաց ու դարձաւ ծաղրանկար: Երգիծանքը մի քանի շերտ ունի, իսկ ծաղրը յստակ է: Բոլշեւիկները ծաղրում էին կապիտալիստներին, յետոյ Հիլերին, այսինքն՝ այն սկսեց միակողմանի դառնալ: Այն ժամանակ երբ ինչ-որ մէկին ծաղրանկար էիր անում, վերջ, այդ մարդը կարող էր հրաժարուել իր գործից ու ամեն ինչից: Շատ խիստ էր: 80-ականների վերջում 90-ականների սկզբում ես յիշում եմ մշակութային որոշակի շերտ ստեղծուեց երգիծանքի ժանրում: Բայց այդ ժամանակ գրաքննութիւնը շատ խիստ էր: Ես յիշում եմ «Ազգ» օրաթերթի խմբագրի հետ հանդիպման ժամանակ, երբ ինձ ասեց ինչ ուզում ես նկարի, սահմանափակում չկայ, ես զարմացայ եւ վախեցայ: Հիւմորն էլ պէտք է ունենայ իր սահմանը եւ չվերածուի վիրաւորանքի: Երգիծանկարչութիւնը ազատ մտքի թթուածինն է, ինչից մարդ կարող է ոգեւորուել, բայց այն երբեք չպէտք է անցնի վիրաւորելուն:



- Քաղաքական երգիծանկարչութիւնը ինչպե՞ս է ընդունուում գործիչների մօտ: Շա՞տ են նեղանում Ձեզանից:

- Իհարկէ նեղանում են: Ասեմ, որ առաջին նախագահի գլուխը միշտ ուղղանկիւն էի նկարում, ունեքրը Մասիս սարի նման, մի աչքը նայում էր դէպի այս կողմ, միւսը՝ այն: Պատկերացրեք, որ Լեւոն Տէր Պետրոսեանը ամենահանգիստն էր ընդունում: Վանօ Սիրադեղեանը եւս նորմալ էր նայում երգիծանկարներին: Իսկ այ Վազգէն Սարգսեանը չէր ընդունում: Բարգէն Արարքեանն այն մարդն էր, ով ամենացաւոտն էր ընդունում իմ երգիծանկարները: Ընդհուպ՝ մինչեւ երկու անգամ ոստիկաններով ցուցահանդէս փակեցին, նոյնիսկ չբացուեց ցուցահանդէսը:

- Գործունեւութեան ընթացքում եղե՞լ են դէպքեր, երբ Ձեզ դատի են տուել երգիծանկարների պատճառով:

- Այո, եղել են: «Առաւօտ» թերթում աշխատելու տարիներին մի դատաւորի էի նկարել, ով սպառնաց դատի տալ: Այդ ժամանակ էլ մամուլի օրէնքներով կամ պէտք է հերքում հրապարակել, կամ ներողութիւն խնդրել: Որոշեցի հերքում հրապարակել: Պատկերացրեք, հերքող երգիծանկարն աւելի ծիծաղելու էր ստացուել, քան առաջինը: Սովորաբար այդպէս է լինում: Հա, ի դէպ՝ այդ երկրորդ երգիծանկարը Պելճիքայի առաջին տեղը գրաւեց:

- Դուք Հայաստանի երգիծանկարիչների միութեան ղեկավարն եք: Ինչո՞վ է զբաղւում միութիւնը:

- 2003 թուականին պաշտօնապէս բացուեց մեր միութիւնը: Մենք կազմակերպում ենք ցուցահանդէսներ, սակայն սովորաբար մեզ դահլիճներ չեն տրամադրում, փողոցում ենք ցուցադրում: Օրինակ, «Արեւալիշապ» փառատօնի ժամանակ խնդրել էինք քաղաքապետարանին մեզ ինչ-որ հարցով աջակցել: Բայց ի զարմանս մեզ, նրանք հենց փառատօնի օրը քանդեցին «Մոսկուա» կինոթատրոնի դիմացի հատուածը եւ մեծ փոս փորեցին: Փառատօնի մասնակից 65 երկրի ներկայացուցիչները չկարողացան գտնել մեր ասած հասցէն, քանի որ այդ հատուածում մեծ փոս էր փորուած: Յետոյ կատակեցի, ասելով, կինոփառատօններին գորգ են փռում, երգիծանկարչութեան փառատօնին՝ փոս են փորում: Իհարկէ, փառատօնի բացումը եղաւ բարձր մակարդակով, եւ՝ նախարարութիւնից էին եկել, եւ՝ տարբեր տեղերից հրաւիրուած հիւրեր կային:

- Շնորհակալ եմ, պարոն Թորոսեան հետաքրքիր զրոյցի համար: